ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց»
ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա-Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում

Դպրոց-Վայքի ավագ դպրոց

Ուսուցիչ-Մարինե Սահակյան

Ղեկավար-Կիմա Օհանեսյան

ՎԱՅՔ 2023

Բովանդակություն

Ներածություն …….. 3

Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության հիմնախնդրի իրավական կարգավորումները …… 5

Հետազոտական մաս ……... 12

Եզրակացություն …….. 16

Գրականության ցանկ ……. 18

Հավելված …….. 19

Ներածություն

Սովորողների իրավունքների պաշտպանության ապահովումը քաղաքացիական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկն է: Քաղաքացիական հասարակության հասունությունը և զարգացումն էապես կախված են երեխայի իրավունքների պաշտպանվածության մակարդակից, երեխայի իրավունքների պաշտպանության ինստիտուտների զարգացման աստիճանից: Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում միասնական և համակարգված քաղաքականության իրականացումն այն կարևորագույն գործիքն է, որն օգտագործվում է արդի ժողովրդավարական պետության կողմից՝ ոլորտում իր ունեցած պարտավորությունները կատարելու նպատակով: Սովորողի իրավունքները խարսխված են իրավահավասարության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների վրա: Երեխայի իրավունքները սոցիալական արժեք են, և յուրաքանչյուր սովորող իրավազոր է պահանջել պետությունից՝ ապահովելու և պաշտպանելու իր իրավունքները:

ՀՀ-ում արդի հասարակական մեծածավալ փոփոխությունների, սոցիալ-տնտեսական ճգնաժամերի, հետպատերազմական հոգեբանության, 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի թողած հետևանքների, մշակութային ու ազգային արժեքների խարխլման պայմաններում մեր հասարակությունում տեղի ունեցող տեղաշարժերը վերջին տասնամյակներում առաջ են բերել հրատապ լուծում պահանջող կարևոր հիմնախնդիր, այն է՝երեխաների իրավունքների պաշտպանությունը: Այսօր մեծաթիվ են մանկատան երեխաները, աճում է երեխաների շահագործումը, հավատքի հողի վրա ինքնասպանությունների, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից անչափահասների շրջանում ոչ պատշաճ քարոզչության, հոգեորսության դեպքերը, հանցագործությունների, ալկոհոլի, ծխախոտի նկատմամբ հակում ունեցող դեռահասների թիվը: Հենց այս ամենն էլ իր հերթին պատճառ է դառնում արատավոր այլ երևույթների տարածման համար [10, էջ 4]: Այս բոլորը կազմում են այն նախադրյալները, որոնք արդիական են դարձնում «Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում» թեմայի ընտրությունը:

1924 թվականին Շվեյցարիայում տեղի ունեցավ Երեխաների բարեկեցության համաշխարհային կոնֆերանս, որտեղ հունիսի 1-ն ազդարարվեց որպես երեխաների պաշտպանության միջազգային օր: Երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող բազմաթիվ միջազգային փաստաթղթեր են ստորագրվել, որոնց թվում 1989 թվականին Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան, որով ըստ էության երեխաները համարվեցին խոցելի հատուկ խումբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության օրենսդրական կարգավորումները:
2. Իրականացնել սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության օրենսդրական պահանջների և դրանց կիրառելիության համեմատական վերլուծություն:
3. Վերլուծել ՀՀ-ում սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության իրավունքի իրացման գործառույթներ իրականացնող սոցիալական ինստիտուտների ու կազմակերպությունների աշխատանքը:

Հետազոտության մեթոդները: Աշխատանքն իրականացնելիս կիրառել ենք հարցման, դիտման, զրույցի մեթոդները:

Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության հիմնախնդրի իրավական կարգավորումները

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել ժողովրդավարության հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալապես պատասխանատու քաղաքացի: Առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին քննադատական մոտեցում ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս: Սովորողը պետք է կարողանա գիտականորեն ընկալել մարդու և հասարակության հիմնահարցերը, քաղաքական կարգերն ու գաղափարները, կայուն զարգացման հակասությունները, հետազոտել և մեկնաբանել դրանք, տիրապետել ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների, իրազեկ լինել տեղական, ազգային և համաշխարհային հիմնախնդիրներին՝ հենվելով ազգային ու համամարդկային արժեքների վրա, իմանա մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունեն անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում, ճանաչի մեդիայի ու խոսքի ազատության դերը, որպես ակտիվ քաղաքացի կարողանա օգտագործել մեդիա գործիքները ժողովրդավարական և մարդու իրավունքների պաշտպանության գործընթացներում, համադրի և հակադրի իրավունքի առաջացման ուսմունքները, առանձնացնի իրավունքի աղբյուները և հիմնական ճյուղերը, մեկնաբանի դրանց նշանակությունը և կարգավորման ոլորտը, ինչպես նաև քննի իրավական համակարգերի ազդեցությունը մարդկանց կյանքի վրա, մեկնաբանի իրավունքի հիմնական ճյուղերը՝ վերլուծելով յուրաքանչյուրի ընդհանուր բնութագրիչները, խնդիրները և կարգավորման ոլորտը [2]:

Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հայտարարել է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օգնության իրավունք, համոզված լինելով, որ ընտանիքին, որպես հասարակության հիմնական բջջի և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու

բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն՝ հասարակության շրջանակներում իր վրա պարտականություններ ստանձնել կարողանալու համար, ընդունելով, որ երեխային, իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար, անհրաժեշտ է մեծանալ ընտանեկան շրջապատում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում, համարելով, որ երեխան հասարակության մեջ ինքնուրույն կյանքի պետք է նախապատրաստվի և դաստիարակվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված իդեալների, հատկապես խաղաղության, արժանապատվության, հանդուրժողականության, ազատության, հավասարության և համերաշխության գաղափարների ոգով, հաշվի առնելով, որ երեխայի նման հատուկ պաշտպանության անհրաժեշտությունը նախատեսված էր 1924 թվականի Ժնևյան և 1959 թվականի նոյեմբերի 20-ին Գլխավոր ասամբլեայի ընդունած Երեխայի իրավունքների հռչակագրերում և ճանաչված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում [3]:

Երեխաները բոլոր ժամանակներում և հասարակարգերում, հատկապես Հայաստանում մշտապես հանդիսացել են հայ հասարակության ամենասիրելի, սակայն միաժամանակ նաև անպաշտպան և խոցելի խավը: Բոլորիս համար նաև երեխաները ցանկացած պետության և հասարակության, նաև մեր ընտանիքի, բոլորի ապագան են: Պետության և հասարակության ապագան կանխորոշվում է նաև նրանով, թե որքանով են պաշտպանված տվյալ պետության մեջ երեխաների իրավունքները: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո: Որպեսզի հստակ լինի, թե ում նկատի ունենք երեխա ասելով, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանվում է, որ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ [4, էջ 84]:

Երեխան առանձին վերցված, որպես հասարակության դեռևս ոչ ամբողջապես ձևավորված և աշխատունակ ինքնուրույն անդամ, ֆունկցիոնալ կախվածության մեջ է իր ծնողներից, ընտանիքից, վերջինիս սոցիալական ապահովվածությունից: Նրա

լիարժեք զարգացման համար անհրաժեշտ է ծնողների սերը, հոգածությունը, խնամքն ու դաստիարակությունը: Սակայն հասարակության կյանքում տեղի ունեցող ճգնաժամային պրոցեսները ներխուժել են ընտանիք՝ փոխելով ստեղծված ներընտանեկան հարաբերությունները, ազդել սերունդների միջև փոխհարաբերությունների բնույթի վրա, բերել բազմաթիվ կոնֆլիկտների, ինչի արդյունքում խեղաթյուրվում են երեխայի բնականոն զարգացման պայմանները, խախտվում հիմնական իրավունքները և օրինական շահերը [3]:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-59, ընդունված է՝ 29.05.1996, ուժի մեջ է մտել 27.06.1996) սահմանում է երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները [5]: Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի կրթության և մասնագիտական պատրաստության համար անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի տրամադրման մատչելիություն: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ը հաստատում է երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը: Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք: Ոչ մի երեխա չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների: Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա [5]: Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները. օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ կառավարության սահմանած կարգով՝ հաշմանդամ երեխաներն ունեն հաշմանդամության սայլակների, հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների ու բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացի թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզներից) և հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական այլ սարքերի (առարկաների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ ՀՀ պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետությունում նույնպես երեխաների հիմնարար իրավունքների պաշտպանության խնդիրը համարվում է առաջնահերթ լուծման ենթակա պետական հոգածության խնդիր: ՀՀ-ում առաջինը՝ մարդու, ապա նաև երեխայի իրավունքները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով [7]: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պաշտպանում է իր քաղաքացիների իրավունքները և ազատությունները յուրաքանչյուր անձի՝ չափահասի կամ երեխայի համար՝ անօրինական միջամտությունից և ոտնձգությունից: ՀՀ Սահմանադրություն, հոդված 19. «Մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի» [7, հոդ. 19]: «**Հոդված 20.** Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք: **Հոդված 38.** Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:» [7, հոդ. 38]:

Այսինքն, ՀՀ գործող Սահմանադրությամբ փորձ է կատարվել հստակեցնել մարդու իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը, համահունչ դարձնելով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին: Իր անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունը սահմանադրական մակարդակով, միանալով համապատասխան միջազգային իրավական ակտերին՝ ձևավորել է համապատասխան օրենսդրական դաշտ: Չնայած այս

ոլորտում մեծ թվով իրավական ակտերի առկայությանը, որոնք ուղղված են երաշխավորելու երեխայի իրավունքների և շահերի ապահովումը, այնուամենայնիվ, նրանց իրական պաշտպանվածության աստիճանը, ելնելով նաև միջազգային և տեղական ուսումնասիրության արդյունքներից, չի կարելի գնահատել բավարար: Երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը պահանջում է, նախևառաջ, այդ ամենի հետևողականորեն կենսագործում:

Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների մասին կոնվենցիային միացել է 1992 թվականի հունիսի 1-ին, վավերացրել է երկու՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի» և «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության» (2005 թ) մասին կամընտիր արձանագրությունները:

- 1996 թվականին ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, իսկ ՀՀ նախագահը ստորագրել է «Մայրության և մանկության պաշտպանության մասին» հրամանագիրը:
- 2012 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունվեց ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը, որը նպատակ ուներ ապահովել երեխայի բարեկեցիկ կյանքն ընտանիքում և հասարակության մեջ:
- 2013 թվականին Երեխայի իրավունքների կոմիտեում ներկայացվել են Երեխայի իրավունքների կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի երրորդ և չորրորդ ազգային զեկույցները և երկու լրացուցիչ արձանագրություններ, ըստ որոնց տրվել են նոր հանձնարարականներ, որպեսզի ոլորտի վիճակը հետագայում ավելի բարելավվի:

Սովորող երեխայի իրավունքները սահմանվում են «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է սովորողի իրավունքներն ու պարտականությունները. «Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Սովորողն իրավունք ունի՝…պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավար-

ժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը» [1]։

Ներկայացվող թեման խիստ կարևոր է և արդիական։ Իրավունքը կանոնների մբողջություն է, որոնց միջոցով մարդիկ կարգավորում են միմյանց միջև հարաբերությունները։ Իրավունքը թույլ է տալիս կենսագործել մեր ազատությունները և ճանաչել պարտականությունները։ Օրենքները պարտադիր կարգավորումներ են, որոնք սահմանում են միասին ապրելու կանոնները իրավական պետության մեջ։

Արժանապատվություն հասկացությունը դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանելը խիստ կարևոր է։ Դրանից է բխում սովորողի կողմից պատասխանատվության գիտակցումը և ստանձնումը։ Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անքակտելի և անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան։ Անձի արժանապատվությունն այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը։ Արժանապատվությունը սկզբունք է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում և միևնույն ժամանակ պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին, ինչպես նաև այլ իրավունքների համատեքստում [8, էջ 413]։ Արժանապատվությունն ու պատիվը կատեգորիաներ են, որոնց վերաբերյալ միանշանակ և հստակ սահմանումներ առկա չեն։ Ինչպես նշել է Հեգելը, որքան հարուստ է բնորոշմանը ենթակա առարկան, որքան ուսումնասիրման ենթակա տարբեր կողմեր ունի, այնքան ավելի տարատեսակ են դրան տրվող բնորոշումները։ Արժանապատվությունը, ինչպես և պատիվը, դասվում են այն երևույթների շարքին, որոնք հոգեհարազատ են յուրաքանչյուրի՝ ամենից առաջ զգայական մակարդակի շնորհիվ։ Առաջին հայացքից թվալով շատ մատչելի մեր հասկացողությանը՝ դրանք այնքան բազմաբովանդակ են, որ իրենց արմատներով ձգվում են մինչև զգացողության ու գիտակցության խորքերը և իրենց ազդեցությունը տարածում են շատ ավելի լայնամասշտաբ, քան կարող է թվալ։ Ներթափանցելով զգայության, գիտակցության և հետևաբար նաև գործունեության բազմապիսի ոլորտներ՝ դրանք ոչ հազվադեպ որոշիչ են դառնում այս կամ այն իրավիճակում։

Մարդու իրավունքների հիմնարար սկզբունք լինելուց բացի՝ այն նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է։ Իբրև այդիպիսին այն ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը ինքն իր հանդեպ և նրա հանդեպ հասարակության վերաբերմունքը, որտեղ ընդունվում է անձի, անհատի արժեքը։ Մի կողմից, մարդու՝ սեփական արժանապատվության գիտակցումը անձնավորության ինքնագիտակցման և ինքնավերահսկման ձևն է, նրա վրա է հիմնվում ինքն իր հանդեպ մարդու պահանջկոտությունը։ Իր արժանապատվության գիտակցումը, հաստատումը և պաշտպանումը ենթադրում է համապատասխան բարոյական արարքների կատարում (կամ, ընդհակառակը, թույլ չի տալիս մարդուն վարվելու իր արժանապատվությունից ցածր)։ Այս իմաստով սեփական արժանա-պատվության ըմբռնումը, խղճի և պատվի հետ միասին, հանդիսանում է մարդու՝ ինքն իր առջև որպես պատասխանատվության գիտակցման եղանակներից մեկը։ Մյուս կողմից, անձի արժանապատվությունը պահանջում է նաև մյուս մարդկանցից՝ հարգել անհատին, ճանաչել մարդու համապատասխան իրավունքներն ու հնարավորությունները, նրան ներկայացվող բարձր պահանջկոտությունը։

«Սովորողն իրավունք ունի՝…ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները» [1]։

Հետազոտական մաս

Հետազոտական աշխատանքն իրականացրել ենք Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքի ավագ դպրոցում: Հետազոտությունն իրականացնելու նպատակով կազմվել է հարցարան կազմված 5 հարցից: Հետազոտությունն իրականացվել է դպրոցում սովորող 100 ավագ դպրոցականների հետ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում:

Նախապես հետազոտության մասնակիցներին տեղեկացվել է, որ հետազոտությունն անանուն է և երաշխավորվում է կոնկրետ անձի տվյալների գաղտնիությունը: Հետազոտության մասնակիցներին նաև տեղեկացվել է, որ հետազոտության տվյալները կիրառվելու են բացառապես գիտական նպատակներով ու խնդրվում է պատասխանել հնարավորինս անկեղծ: Այսպիսով, հետազոտության ընթացքում երեխաներին տրվել են հետևյալ հարցերը.

Հարց 1. Որքանո՞վ ես տեղեկացված սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության մասին դպրոցում: Հետազոտության մասնակիցների 59%-ը հարցին պատասխանել են «Բավարար տեղեկացված եմ»: Առաջին հարցի հետազոտության արդյունքները ներկայացված են տրամագիր 1-ում.



Տրամագիր 1. Հետազոտության մասնակիցների դպրոցում սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության մասին հարցման արդյունքները

Հետազոտության մասնակիցների 24%-ը հարցին պատասխանել են «Լավ տեղեկացված եմ», 1%-ը «Որոշ չափով տեղեկացված եմ» և 16%-ը «Տեղեկացված չէ»:

Հարց 2. Որտե՞ղից ես իմացել սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանված լինելու մասին: Հետազոտության մասնակիցների 62%-ը հարցին պատասխանել են «Դպրոցից», 16%-ը հարցին պատասխանել են «Ընտանիքից», 16%-ը «Ինտերնետից» և 6%-ը «Փողոցից»: Երկրորդ հարցի հետազոտության արդյունքները ներկայացված են տրամագիր 2-ում.



Տրամագիր 2. Հետազոտության մասնակիցների դպրոցում սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանված լինելու տեղի մասին հարցման արդյունքները

Հետազոտության մասնակիցներին ուղղված երրորդ հարցն է. «Դպրոցում քո իրավունքների և ազատությունների խախտման, պատվի և արժանապատվության ոտնահարման դեպքում ո՞ւմ կդիմես»: Որպես պատասխան սովորողներին առաջարկվել են «Ծնողներիս», «Դասղեկիս», «Ուսուցչիս», «Մեծ եղբորս», «Ընկերոջս» տարբերակները: Հետազոտության մասնակիցների 50%-ը հարցին պատասխանել են «Ծնողներիս», 32%-ը հարցին պատասխանել են «Դասղեկիս», 18%-ը «Մեծ եղբորս», իսկ «Ուսուցչիս» և «Ընկերոջս» տարբերակները չի ընտրել մեր հետազոտության մասնակից ոչ մի ավագ դպրոցական: Սովորողի իրավունքների, ազատությունների խախտման, պատվի և արժանապատվության ոտնահարման դեպքում դիմելու հարցի վերաբերյալ հետազոտության արդյունքները ներկայացված են տրամագիր 3-ում.



Տրամագիր 3. Հետազոտության մասնակիցների դպրոցում սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի, արժանապատվության պաշտպանելու համար դիմելու մասին հարցման արդյունքները

Տրամագիր 4-ում ներկայացված են սովորողի իրավունքների, ազատությունների խախտման, պատվի և արժանապատվության պաշտպանված լինելու անհրաժեշտության վերաբերյալ ամենաշատ լսելու, խոսելու տեղի, վայրի հարցի հետազոտության արդյունքները։



Տրամագիր 4. Հետազոտության մասնակիցների դպրոցում սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի, արժանապատվության պաշտպանելու մասին լսելու տեղի հարցման արդյունքները

Հետազոտության մասնակիցների 82%-ը հարցին պատասխանել են «Հասարակագիտության ժամին», 16%-ը հարցին պատասխանել են «Դասղեկի ժամին», 2%-ը «Տանը՝ մեր ընտանիքում», իսկ «Դասերից հետո՝ փողոցում» տարբերակը չի ընտրել մեր հետազոտության մասնակից ոչ մի ավագ դպրոցական։

Հետազոտության մասնակիցներին ուղղված հինգերորդ և վերջին հարցն է. «Որքանո՞վ ես կարողանում դպրոցում պաշտպանել քո իրավունքները, ազատությունները, պատիվը և արժանապատվությունը»: Որպես պատասխան սովորողներին առաջարկվել են «Կարողանում եմ լավ պաշտպանել», «Կարողանում եմ բավարար չափով պաշտպանել», «Կարողանում եմ որոշ չափով պաշտպանել», «Չեմ կարողանում պաշտպանել» տարբերակները: Հետազոտության բոլոր մասնակիցները 100%-ով հարցին պատասխանել են «Կարողանում եմ լավ պաշտպանել»: Մյուս տարբերակները չի ընտրել մեր հետազոտության մասնակից ոչ մի ավագ դպրոցական, ինչը լիովին հասկանալի է, երբ նայում ենք մեր հետազոտության մասնակիցների տարիքին: Դպրոցում սովորողի իրավունքների, ազատությունների խախտման, պատվի և արժանապատվության պաշտպանել կարողանալու չափի վերաբերյալ հետազոտության արդյունքները ներկայացված են տրամագիր 5-ում.



Տրամագիր 5. Հետազոտության մասնակիցների դպրոցում սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի, արժանապատվության պաշտպանել կարողանալու վերաբերյալ հարցման արդյունքները

Այսպիսով, դպրոցում սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության վերաբերյալ հետազոտության մասնակից սովորողների շրջանում կատարված հարցումները թույլ տվեցին կատարել մի շարք եզրակացություններ:

Եզրակացություն

Ուսումնասիրելով սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանված լինելու իրավունքի էությունը եկանք հետևյալ եզրահանգումների.

1. Երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում համարվում է առաջնահերթ լուծման ենթակա խնդիր: ՀՀ-ում երեխայի իրավունքները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով: Իր անկախացումից հետո ՀՀ-ն սահմանադրական մակարդակով ձևավորել է համապատասխան օրենսդրական դաշտ:
2. Սովորողների իրավունքները, պատվի և արժանապատվության պաշտպանվածությունը մարդու անքակտելի իրավունքներից է: Այն երեխայի ինքնուրույնության և անհատականության դրսևորման չափանիշն է:
3. ՀՀ-ի վերջին տարիների բազմաթիվ ձեռքբերումների մեջ առանձնանում է երեխայի իրավունքների և ազատությունների հայեցակարգի ընդունումը, որի առանցքը «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի սահմանած իրավունքներն ու ազատություններն են, այդ թվում նաև պատվի և արժանապատվության պաշտպանվածության իրավունքը:
4. ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է Սահմանադրության մեջ տեղ գտած դրույթների և ազգային օրենսդրության շրջանակներում:
5. ՀՀ միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթները սահմանվել են երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրական ակտերում՝ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենք, ՀՀ ընտանեկան օրենսգիրք և այլ օրենքներ ու օրենսդրական ակտեր:
6. Հետազոտության մասնակիցների ավելի քան 80%-ը բավարար կամ լավ տեղեկացված են, գիտեն իրենց իրավունքները, 62%-ը իրենց իրավունքների և

ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանված լինելու մասին տեղեկացվել են դպրոցում, իրավունքների և ազատությունների խախտման, պատվի և արժանապատվության ոտնահարման դեպքում առաջին հերթին կդիմեն ծնողներին, 82%-ի կարծիքով սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության մասին ամենաշատը լսում են հասարակագիտության ժամին, բոլորը կարողանում են դպրոցում լավ պաշտպանել իրենց իրավունքները, ազատությունները, պատիվը և արժանա-պատվությունը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության մասին ՀՀ օրենք:

2. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ:

3. Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին, ՄՊ ՀՀՊՏ 2008 / Հատուկ թողարկում, Նյու Յորք, 20.11.1989 թ.:

4. Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտեր, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, Երևան, 2016, էջ 84:

5. Պետրոսյան Ա. Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի հանրապետությունում, Եր., 2009 թ.:

6. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք

7. ՀՀ Սահմանադրություն, 2015 թ., http://edu.am/index.php/am/documents/index/89 http://www.osce.org/hy/yerevan/74895?download=true,

8. Энциклопедия философских наук, т. 1, М., 1974: - 413 с.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1.

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը դպրոցում

Հետազոտության հարգելի մասնակից, հետազոտությունն անանուն է: Երաշխավորում ենք տվյալների գաղտնիությունը: Խնդրում ենք հարցերին պատասխանել հնարավորինս անկեղծ:

1. Որքանո՞վ ես տեղեկացված սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության մասին դպրոցում.

ա) լավ տեղեկացված եմ,
բ) բավարար տեղեկացված եմ,
գ) որոշ չափով տեղեկացված եմ,
դ) տեղեկացված չեմ:

2. Որտե՞ղից ես իմացել սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանված լինելու մասին.

ա) դպրոցից,
բ) ընտանիքից,
գ) ինտերնետից,
դ) փողոցից:

3. Դպրոցում քո իրավունքների և ազատությունների խախտման, պատվի և արժանապատվության ոտնահարման դեպքում ո՞ւմ կդիմես.

ա) ծնողներիս,
բ) դասղեկիս,
գ) ուսուցչիս,
դ) մեծ եղբորս,
ե) ընկերոջս,
զ) բոլոր դեպքերն էլ կարող են լինել:

4. Որտե՞ղ եք ամենաշատը խոսում սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության մասին.

ա) հասարակագիտության ժամին,
բ) դասղեկի ժամին,
գ) դասերից հետո փողոցում,
դ) տանը՝ մեր ընտանիքում:

5. Որքանո՞վ ես կարողանում դպրոցում պաշտպանել քո իրավունքները, ազատությունները, պատիվը և արժանապատվությունը.

ա) կարողանում եմ լավ պաշտպանել,
բ) կարողանում եմ բավարար չափով պաշտպանել,
գ) կարողանում եմ որոշ չափով պաշտպանել,
դ) չեմ կարողանում պաշտպանել:

Շնորհակալություն մասնակցության համար